

336.3

Հ - 11

2-րդ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

— ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ —

ՅԵՎ

ԿԱՏԱՐԻ 2-րդ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ
ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱՆԸ (ԿՈՆՏՐԱԳԵՆՏ)



Հ. Խ. Ս. Հ. ՀԻՆԺՈՂԿՈՄԱՏ

ՅԵՐԵՎԱՆ—1926

14394

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պետական ներքին փոխառությունները, վորոնք նախորդված են գյուղում իրացվելու, չեն գործադրվում վոչ մի յերկրում: Միայն Բանփորա-Գյուղացիական պետությունը, մոտահոված լինելով գյուղացիության տնտեսության բարգավաճման խնդրով, միակն և հանդիսանում ամբողջ աշխարհում, վորը բաց և թողնում փոխառություններ, հատկապես գյուղացիության համար:

Նման փոխառություններ խորհրդային իշխանությունը բաց և թողնում, սկսած 1922 թ. գարնանից: 1922 թ. բաց և թողված առաջին հացային փոխառությունը, 1923 թ. յերկրորդ հացային փոխառությունը, 1924 թ. 1-ին գյուղացիական խաղարկու փոխառությունը և 1925 թ. գարնանը և ամրանը կրկնակի կերպով իրացված են 1-ին գյուղացիական փոխառության պարտատոմսերը, վորոնք մուծված են 1924 թ. աշնանը և ձմրանը՝ ի գիմաց գյուղատնտեսական հարկի:

1925 թ. աշնանը խորհրդային կառավարությունը բաց և թողել գյուղի համար նոր փոխառություն: Միության Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1925 թ. հոկտեմբերի 2-ի վորոշմամբ, բաց և թողված 2-րդ Պետական Գյուղացիական խաղարկու փոխառությունը:

Այդ փոխառության իրացումը կատարվում և նույն հիմունքներով, ինչպես և, 1-ին Գյուղացիական Փոխառության կրկնակի իրացումն. այսինքն՝ վոչ թե միայն Ֆին-մարմինների միջոցով, այլ մասնակից դարձնելով այդ գործին մեծ թվով գանաղան կադմակերպու-

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Դրատ. 462 Բ.

Պատվ. 3200

Տիրաժ 2000

Թյունները և առանձին անձանց: Փոխառության իրա-
ցումը կատարվելու չե ֆին-մարմինների, բանկերի,
Աշխխանդանձարկղների, փոխադարձ՝ վարկի բնկերու-
թյունները, փոստ-հեռագրական հիմնարկների, կոո-
պերացիայի, շրջանային լիազորների և փոխառության
պարտատոմսերը տարածող գյուղական գործակալների
միջոցով: Այդ գործակալները կոչվում են գյուղխոր-
հրդների նախագահներին և անդամներին, փոխողում-
ներից, խրճիթ-ընթերցարանների վարիչներից, ուսու-
ցիչներից, գյուղատնտեսներից, բժիշկներից, անհատ
գյուղացիներից և այլն, վերոնք ցանկություն են հայտ-
նել, տանելու աշխատանքներ: Հենց նրանց աշ-
խատանքներին և, նվիրվում այս գրքույկը, վորը նախ-
աակ ունի պատմելու 2-րդ Գյուղացիական Փոխառու-
թյան եյության և տարածման կարգի մասին:

Ամեն մեկը, ով իր վրա չե վերցրել գյուղացիական
փոխառության տարածման պարտականությունը,
կգանի այս գրքույկում անհրաժեշտ տեղեկություններ:
Իսկ ուղադրությամբ կարգացողը, կարող և անել ղեկու-
ցում՝ փոխառության մասին գյուղական հավաքույթ-
ներում, գրույցներ կաղմակերպել խրճիթ-ընթերցա-
րաններում և գյուղացուն խորհուրդներ տալ:

Այս գրքույկը հանդիսանում և, իրեն ուղղեցույց
յուրաքանչյուրի համար, ով վորոչեւ և այդ գծվարին
գործում ողնել պետությանը, տարածելով 2-րդ Գյու-
ղացիական խաղարկու Փոխառության պարտատոմսերը
խորհրդային բովանդակ յերկրում:

I.

ԻՆՁԻ ՀԱՄԱՐ Ե ԲԱՅ ԹՈՂՎԱԾ 2-ԲԴ ԳՅՈՒՂԱՑԻԱ- ԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Փոխառությունները վորոնք ձեռնարկված են խոր-
հրդային կառավարության կողմից գյուղի համար,
առաջին հերթին համապատասխանում են գյուղացիու-
թյան սեփական շահերին և նրա տնտեսությանը:

Այդ նպատակով եր բաց թողված 1-ին և 2-րդ հա-
ցային փոխառությունները: Սրանք հնարավորություն
եյին տալիս գյուղացուն՝ պահպանել իր միջոցները
վոչնչացումից: Դեռ լավ են հիշում բոլորը, թե ինչպի-
սի արագությամբ եր բնկնում խորհրդային գրամա-
նիչը: Յեւ ահա գյուղացին, գնելով հացային փոխա-
ռության պարտատոմսը, վորը գնահատվում եր, վոչ
թե խորհրդային նիշերով, այլ կայուն միավորներով՝
ցորենի փթերով, կարող եր հանգիստ լինել խնայողու-
թյունների համար: Իթային պարտատոմսը ամեն ժա-
մանակ հավատար եր մի փութ ցորենի, ինչպիսի արա-
գությամբ ել թեկուզ բնկեր խորհրդային գրամանիչը:

Այնուհետև հացային փոխառության պարտատոմ-
սերը չաա հարմար եյին 1922 թ. պարենավորման և
1923 թ. գյուղատնտեսական հարկերը վճարելու տեսա-
կետից:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր խորհրդային
կառավարությունը բաց թողնելով հացային փոխա-
ռությունները, բնդառաջ յեկավ գյուղացիությանը և

նշանակալից չափով թեթեացրեց նրա հարկային պարտականությունները կատարումը:

Նույնը կարելի չե ասել 1-ին Գյուղացիական Փոխառութան մասին: Տարբերությունը միայն նրանումն է, վոր այդ փոխառությունը բաց է թողված կենտոգործկոմի և Ժողկոմխորհի 1924 թ. մարտի 19-ի վորոշմամբ, յերբ արդեն կիրառվում եր կայուն վայրատան՝ հարկը դառնում է զբաղմունքի և այդ պատճառով փոխառությունը իր բոլոր հարմարությունները և ոգուաները գյուղացուն տալիս եր այլ ձևով:

Կառավարությունը իր վորոշման մեջ 1-ին Գյուղացիական Փոխառության մասին, հայտնել եր, վոր փոխառությունը բաց է թողված այն նպատակով, վորպեսզի թեթեացվի գյուղատնտեսական հարկի վճարումը և հնարավորություն արվի գյուղացիներին, հարմար և ձևնառու պայմաններով պահ տալու նրանց խնայողություններն ու ժամանակավորապես ազատ մնալը ցած գումարները:

Ներկայումս բաց թողված 2-րդ Գյուղացիական Փոխառությունը, նույնպես ձգտում է բավարարել գյուղացիական պահանջները: Գյուղացին աշխանր, հավաքելով բերքը վաճառում է՝ հացը, բամբակը և այլն, ստանալով վարձատրություն բաղմամսյա աշխատանքների համար: Իր զբաղմունքի մասը գյուղացին ծախսում է, իսկ մյուս մասը հետաձգում է այս կամ այն կարիքները բավարարելու համար, վորը կրում է նպատակային բնույթ (տնտեսության վերանորոգում, գույքի գնումն, գյուղհարկի վճարումն և այլն):

Հաճախ վորոշ նպատակի հատկացված զբաղմունք, անհնար է լինում հավաքել մի անգամից, այլ աստիճանաբար այն խմատով թերեւ՝ վոր ձևնառու չի բերքը:

վաճառել միանգամից, կամ թե այլ պատճառներից դրրդված:

Ընդհանուր առմամբ գյուղացու տրամադրության տակ կան փողեր, վոր նա պահում է ամենակարեւոր կարիքը բավարարելու նպատակով: Պահել զբաղմունքով չե, վորովհետեւ նա կայուն է՝ այսինքն ներկայիս զբաղմունքով ամեն ժամանակ կարելի չե գնել նույն քանակությամբ ապրանք: Գյուղացիներից չատերը բառ հին սովորությունների ինչպես ավանդված է յեղել հայրերից և պապերից պահում են զբաղմունքով կում այն ել հողի մեջ: Բայց փողը պահելով պուլիկում չահ չի տա. և ահա խորհրդային կառավարությունը հաշվի առնելով գյուղացու կարիքը, հարմար և ձևնառու կերպով նրա զբաղմունքի տեղավորման խնդիրը, բաց է թողել 1925 թ. նոյեմբերի 1-ին 2-րդ Գյուղացիական Փոխառությունը, վորպեսզի զբաղմունք և՛ ոգուտ տա և՛ հարկ յեղած բույսին հնարավոր լինի ոգտադործել:

Գյուղացիական փոխառությունը կարելի չե նույնպես անվանել «Սորհրդային Պուլիկ», բայց ավելի սուղը և հաստատ: Սա փոխարինելու չե հին, անդրըջրհեղեղյան, հնադարյան պուլիկին: Դրանում համոզվելու համար, անհրաժեշտ է ջոկ-ջոկ քննել բոլոր այն հարմարությունները և շահավետ կողմերը, վոր տալիս է գյուղացիական փոխառությունը գյուղին:

II.

ԻՆՉՊԻՍԻ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՈԳՈՒՏՆԵՐ Ե
ՏԱԼԻՍ ՔՅՈՒՂԱՅՈՒՆ 2-ՐԴ ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Այդ ոգուաները և հարմարությունները, վորը տալիս է 2-րդ Գյուղացիական Փոխառությանը շատ մեծ

են. փոխառութեան հարմարութիւնը կայանում է ցանկացած քանակութեամբ դրամի տեղավորման մեջ: Չնչին քանակով դրամը նույնպէս կարելի չէ տեղավորել փոխառութեան մեջ, վորովհետեւ կան 5 ուրբիանոց պարտատոմսեր (կան նաեւ 10 և 50 ուրբիանոց): Խոչոր քանակութեամբ դրամը ևս կարելի չէ տեղավորել փոխառութեան մեջ, վորովհետեւ իրավունք է տրվում ցանկացած քանակութեամբ պարտատոմսեր գնելու: Բացի դրանից մոտիկ ապագայում կատարվելու չէ պարտատոմսերի մաս-մաս գնումն գյուղացիական աղքատ և չքավոր անտեսութիւնների համար: Փոխառութեան ոգուտները կայանում են տոկոսների և շահումներին մեջ:

Տոկոսներ. 2-րդ Գյուղացիական Փոխառութեան պարտատոմսերը տալիս են տարեկան 12 տոկոս յեկամուտ. այլ խոսքով՝ 5 ուրբիանոց պարտատոմսերը տալիս են տարեկան 60 կոպեկ յեկամուտ, 10 ու.՝ 1 ու. 20 կ. և 50՝ ու. 6 ուրբի:

Այդ յեկամուտն ստացվում է ամեն ամիս, կըտրոններով: Յուրաքանչյուր ամիս գյուղացին կարող է կտրել պարտոմսից մեկ կտրոնը և փոխարինել դրամով. յուրաքանչյուր ամսական կտրոնը տալիս է 5 կոպեկ՝ 5 ու. պարտոմսից. 10 ու.՝ 10 կոպեկ և 50 ու.՝ 50 կոպեկ: Ամեն ամիս կտրոնների դրամի վերածելը պարտադիր չէ, վորովհետեւ նրանք դործում են 3 տարվա ընթացքում, սկսած այն օրից, յերբ լրացել է կտրոնի ժամկետը:

Յուրաքանչյուր պարտոմս ունի 24 կտրոն. կըտրոնները համարակալված են ըստ կարգի և վճարվում են հետևյալ ժամկետներին՝

№ 1	կտրոնը սկսած	1925 թ. դեկտեմբ. 1-ից մինչև	1928 թ. դեկտեմբ. 1-ը
№ 2	»	1926 թ. հունվարի 1-ից »	1929 թ. հունվարի 1-ը
№ 3	»	1926 թ. փետրվար. 1-ից »	1929 թ. փետրվար. 1-ը
№ 4	»	1926 թ. մարտի 1-ից »	1929 թ. մարտի 1-ը
№ 5	»	1926 թ. ապրիլի 1-ից »	1929 թ. ապրիլի 1-ը
№ 6	»	1926 թ. մայիսի 1-ից »	1929 թ. մայիսի 1-ը
№ 7	»	1926 թ. հունիսի 1-ից »	1929 թ. հունիսի 1-ը
№ 8	»	1926 թ. հուլիսի 1-ից »	1929 թ. հուլիսի 1-ը
№ 9	»	1926 թ. ոգոստ. 1-ից »	1929 թ. ոգոստ. 1-ը
№ 10	»	1926 թ. սեպտեմ. 1-ից »	1929 թ. սեպտեմբ. 1-ը
№ 11	»	1926 թ. հոկտեմ. 1-ից »	1929 թ. հոկտեմբ. 1-ը
№ 12	»	1926 թ. նոյեմբ. 1-ից »	1929 թ. նոյեմբ. 1-ը
№ 13	»	1926 թ. դեկտեմ. 1-ից »	1929 թ. դեկտեմ. 1-ը
№ 14	»	1927 թ. հունվար. 1-ից »	1930 թ. հունվարի 1-ը
№ 15	»	1927 թ. փետրվար. 1-ից »	1930 թ. փետրվարի 1-ը
№ 16	»	1927 թ. մարտի 1-ից »	1930 թ. մարտի 1-ը
№ 17	»	1927 թ. ապրիլի 1-ից »	1930 թ. ապրիլի 1-ը
№ 18	»	1927 թ. մայիսի 1-ից »	1930 թ. մայիսի 1-ը
№ 19	»	1927 թ. հունիսի 1-ից »	1930 թ. հունիսի 1-ը
№ 20	»	1927 թ. հուլիսի 1-ից »	1930 թ. հուլիսի 1-ը
№ 21	»	1927 թ. ոգոստոս. 1-ից »	1930 թ. ոգոստոսի 1-ը
№ 22	»	1927 թ. սեպտեմ. 1-ից »	1930 թ. սեպտեմբ. 1-ը
№ 23	»	1927 թ. հոկտեմ. 1-ից »	1930 թ. հոկտեմբ. 1-ը
№ 24	»	1927 թ. նոյեմբ. 1-ից »	1930 թ. նոյեմբերի 1-ը

Շահումներ. 2-րդ Գյուղացիական Փոխառութեան պարտատոմսերով կատարվելու յեն վիճակահանումներ 8 անգամ, վորոնցից առաջինը կայացել է 1925 թ. դեկտեմբերի 15-ին, իսկ մնացածը կայանալու յեն 1926—27 թ. թ.: Ամեն մի վիճակահանման մեջ խաղարկվելու յեն փոխառութեան յուրաքանչյուր սերիայի համար (իսկ ամբողջ փոխառութիւնը բաղկացած է 10 սերիայից, վորից ամեն մեկը հավասար է 10 միլիոն ուրբ.) 3821 շահումներ 125.000 ու. գումարով, վորոնք ըստ իրենց չափի, բաժանվում են հետևյալ կերպ՝

շահում	5000 ուրբու
5	1000 ..
25	500 ..
50	100 ..
700	50 ..
2500	25 ..

Իսկ փոխառության ամբողջ գումարի վրա այսինքն 10 սերիաների համար խաղարկվելու յեն 32.810 շահումներ 1.125.000 ո., իսկ 8 վիճակահանումների ընթացքում խաղարկվելու յեն 262.480 հատ շահող ձևեր 10 միլիոն ուերլի գումարով: Յուրաքանչյուր պարտատոմս մյուս պարտատոմսերի հետ հավասար իրավունք և հնարավորություն ունի շահելու:

Շահած պարտատոմսը իր ուժը չի կորցնում, նա կարող է շահել նաև հաջորդ վիճակահանումների ժամանակ, նրա կտրոնները վճարվում են, իսկ ինքը պարտատոմսը պահպանում է իր լիակատար արժեքը:

Պարտատոմսերի հետ գնման մասին. վորքան էլ վոր պարտատոմսը ոգուտ առ իր տոկոսներով և շահումներով, նա իր արժեքը չի կորցնում: 1927 թ. նոյեմբերի 1-ից պետությունը հետ և գնելու պարտատոմսերը, վճարելով նրանց լրիվ արժեքը, այսինքն այն գումարը, վորը ծախսել է գյուղացիին պարտատոմսը գրանելիս: Ֆերեք տարվա ընթացքում, ցանկացած ժամանակ, մինչև 1930 թ. գյուղացին կարող է իր պարտատոմսը ներկայացնել Շրջգործկոմին, ֆինրաժին, բանկը, աշխանագանձարկղերը ստանալով նրա փոխարեն հասանելիք գրամը:

Կարելի չէ վաճառել բանկին. սուր կարիքի դեպքում գյուղացին իր պարտատոմսը կարող է վաճառել բանկին, վորը ազատ գնում է անասճանափակ քանակով:

Ընդունվում է ի դիմաց գյուղիարկի. կարիք չեղած դեպքում պարտատոմսը կարելի չէ վճարել ի դիմաց գյուղհարկի: 2-րդ Գյուղացիական Փոխառության պարտատոմսերն ընդունվում են ի դիմաց 1925, 1926 և 1927 թ. թ. գյուղհարկի, իրենց լրիվ արժեքով, վորը նշանակված է նրանց վրա. հաշվի յեն առնվում կտրոն-

ները յեթե այդպիսիների ժամկետն արդեն լրացել է բայց չեն փոխարինված գրամով:

Որինակ՝ յեթե գյուղացին գնել է 10 ո. պարտատոմս 1925 թ. դեկտեմբերի 1-ին և վորոշել է մոծել ի դիմաց 1926 թ. գյուղհարկի՝ դեկտեմբերի 16-ին, և միևնույն ժամանակ չի կտրել վոչ մի կտրոն, այդ դեպքում այդպիսի պարտատոմսը հաշվում է 11 ո. 25 կ., վորովհետև նա ինքն արժե 10 ուերլի. կտրոնները սկսած 1925 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1926 թ. դեկտեմբերի 1-ը հավասար են 1 ո. 20 կ. և ընթացիկ կտրոնի մի մասը այն է, 15 ուրվա համար կազմում է 5 կոպեկ:

Գյուղացիական փոխառության հարմարությունները և շահավետությունները պարզ են և ափսոսալի: Բայց դրանից լիակատար ոգտվելու համար, գյուղացին պետք է վաղորդ գնի պարտատոմսը և կարելույն չափ յերկար պահի իր մոտ, չծախսելով բանկին և չմոցնելով ի դիմաց գյուղհարկի, այլ պետք է աշխատել պահել, մինչև վոր պետություն կողմից պարտատոմսերը հետ գնվեն:

Միմիայն այդ դեպքում, գյուղացին կարող է կտրել և վերածել գրամի բոլոր կտրոնները և մասնակցել վիճակահանումներին:

Ի՞նչպես իմանալ շահելու մասին. շահած բոլոր պարտատոմսերի համարները տպագրվում են յուրաքանչյուր վիճակահանման ժամանակ՝ Մյուսթյան կենտրոնգործկոմի սրգան «Իզվեստիայի» և տեղական մի շարք լրագրերում: Վիճակահանումները վերջանալուց հետո, կազմվում է շահած համարների հատուկ աղյուսակ և ուղարկվում է բոլոր գյուղխորհրդներին, շրջգործկոմներին, Աշխատավորական խնայողական Գանձարկղերին, բանկերի բաժանմունքներին, փոստ-հեռագրական բաժանմունքներին և կոոպերատիվներին:

Բացի այդ, չահած համարները հայանի յեն տեղական բոլոր թերթերի խմբագրութիւններին, փորոնք պատասխան են տալիս թե զրավոր և թե բանավոր հարցերին:

III.

ՎՈՐՏԵՎ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎՃԱՐՎՈՒՄ ՏՈԿՈՍՆԵՐԸ ՅԵՎ ՇԱՀՈՒՄՆԵՐԸ

ա) Շրջանային, գավառային և հանրապետական գրամարկղերի,

բ) Պետրանկի բոլոր բաժանմունքների,

գ) Աշխատավորական խնայողական գանձարկղերի և դ) Փոստ-հեռագրական բաժանմունքների կողմից:

Տոկոսների վճարումը կատարվում է կտրոնը ներկայացնելով՝ առանց պարտատոմսի: Կտրոնը պետք է կտրված լինի այնպես, փորպէսզի նրա №-ն ու ստորագրութիւնը չպատռեն: Հակառակ դեպքում կտրոնը կորցնում է իր ուժը: Դրամը արվում է կտրոնը ներկայացնելու պէս: Տվեցի՛ր կտրոնը՝ ստացիր դրամը: Շահած գրամն ստանալու համար պետք է միայն ներկայացնել պարտատոմսը (առանց գրավոր դիմումի) և դրամը անմիջապէս, կամ ծայրահեղ դեպքում մինչև բանվորական օրվա վերջնայր, կվճարվի:

Շահած գումարը վճարելուց հետո, պարտատոմսը վերագործվում է: Միայն 500, 1000 և 5000 ո. շահումներն են, փոր վճարվում են պետրանկի վարչութիւն կողմից Մոսկվայում: Անմիջականորեն Մոսկվա դիմելը պարտագիր չէ: Հիմնարկութիւնը, (փորն իրավունք ունի վճարել շահումները և փորին ներկայացվել և պարտատոմսը, շահած գումարը ստանալու համար) Մոսկվա յե ուղարկվում պարտատոմսը նրա ճշտու-

թիւնն ստուգելու համար և պարտատոմսը հետ ստանալուն պէս, շահումը վճարվում է: Մոսկվա ուղարկելու ժամանակամիջոցում, նրա արողը արվում է համապատասխան անդորագիր, նշանակելով №-ը և շահած գրամի գումարը: Շահումը վճարելիս հիմնարկութիւնն իրավունք չի արվում կատարել վորեւէ գանձում և հատկացում:

Տոկոսների պահանջման ժամանակ սահմանված է յետամյա արտոնյալ ժամանակամիջոց, սկիզբը համարելով կտրոնի վերը նշանակված ժամկետը: Շահումը պահանջելու համար նույնպէս արվում է արտոնյալ յետամյա ժամանակամիջոց, սկիզբը հաշվելով խաղարկման այն օրը յերը ավյալ պարտատոմսը շահել է:

Գյուղահարկի դիմաց մուծված պարտատոմսերի վերաբերեալ շահումները չեն վճարվում:

Ինչպէ՞ս են կատարվում վիճակահանումները: Գյուղացիական փոխառութիւն պարտատոմսերի խաղարկումը (կամ վիճակահանումը) կատարում է մի հատուկ հանձնաժողով՝ բաղկացած գյուղացիական, հասարակական, կոոպերատիվ, պետական, մասնավոր և այլն կազմակերպութիւնների ներկայացուցիչներից:

Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝ փոխգործի, կենտոմի, Հողանտառ Արհեստակցական միութիւն, Բանգյուղտեսչութիւն և այլոց ներկայացուցիչները: Խաղարկումը կատարվում է հատուկ մեքենայով փորը դործում է ելեքտրական ուժով: Տոմսերը այդ մեքենայի ակերից հանում են մինչև 8 տարեկան հասակի յերեխաները:

Հանված այն տոմսերը, փորոնց վրա գրված են թվանշաններ կաղմում է շահվող պարտատոմսի համարը:

Համարները հայտարարվում են հանձնաժողովի նախագահի և 2 անդամների կողմից և միաժամանակ

գրանցվում են 5 տեղ՝ հատուկ քարտերում և հատուկ մատյաններում:

Խաղարկությունը տեղի յե ունենում հրապարակով ուր կարող է ներկա գտնվել յուրաքանչյուր ցանկացող: Ներկա յեղողները հերթով և խմբովին կարող են դիտել խաղարկման վողջ գործողությունը և հետևել խաղարկիչ հանձնաժողովի աշխատանքներին: Բոլոր ներկա յեղողները կարող են իրենց ուզած հարցերը տալ փոխառության ու խաղարկման մասին. նրանք անմիջապես մանրամասն պատասխան կտանան հանձնաժողովից: Խորհրդային կառավարությունը ճշտությամբ և անկողմնակալ կերպով կատարում է իր պարտականությունները բնակչության հանդեպ:

IV.

Ի՞նչ ՈԳՈՒՏ ՈՒՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Հնարավորությունը տալով խնայողությունները հարմար ու չահավետ կերպով պահ տալու, ձեռնարկելով 2-րդ Գյուղացիական փոխառությունը, նույնպե՜ս և այլ փոխառություններ, վորոնք բաց են թողված քաղաքի ազգաբնակչության համար, պետությունն իր գանձարանն և հավաքում բնակչության ձեռքում ժամանակավորապես ազատ մնացած գրամբ:

Բնակչությանից փոխառություն վերցնելով, և գրա փոխարեն վորոչ չահ տալով, պետությունը հավաքած գրամբ ոգտագործելու յե ամբողջ տնտեսության և առաջին հերթին գյուղատնտեսության բարձրացման համար:

Մեր յերկիրը գյուղացիական է. և յեթե մենք խոսում ենք մեր տնտեսության վերականգման մասին, դա փաստորեն նշանակում է վոր անհրաժեշտ է բարձրացնել գյուղատնտեսությունը:

Մեր տնտեսության վիճակը բավական ցածր է. համաշխարհային և քաղաքացիական պատերազմները քայքայել են գյուղացու տնտեսությունը: Ծիչո է վերջին ժամանակներս մեր գյուղացիությունն սկսել և վերականգնել, այնուամենայնիվ նա չափ ծախսեր է պահանջում: Հարկավոր է պատրաստել գյուղատնտեսական մեքենաներ և ինեվենտար, կազմակերպել վոռողման և ցամաքեցման աշխատանքներ, կովել հացարույսերի վնասատուներին դեմ, նորոգել ու կոռույցել նոր բնակարաններ, բարելավել և լայնացնել ժողովրդական լուսավորության գործն ու առողջապահությունը և մի շարք ուրիշ կարիքներ, վորոնք կանգնած են խորհրդային կառավարության առաջ: Խորհրդային իշխանությունը չի ցանկանում ավելացնել հարկերը, բնդհակառակը, նա հենց նոր է, վոր ադատվել է ծանր վիճակից, բայց արդեն իջեցրել է հարկերը: 1925 թ. գյուղհարկը պակասեցվեց 100 միլիոն ուրլով: Խորհրդային կառավարությունը ցանկանում է ապագայում ևս՝ տարեց-տարի նվազեցնել գանձվելիք հարկը:

Ավելին կասենք, վոր խորհրդային իշխանությունը իր աղքատիկ գանձարանից հատկացրել է հսկայական գումար—175 միլիոն ուրլի, գյուղատնտեսական վարկի լայնացման, գյուղատնտեսական մեքենաների գնման, գյուղատնտեսական կոոպերացիան ուժեղացնելու և ուրիշ կարիքներ հոգալու համար:

Վորպեսզի գյուղատնտեսությունը բարձրացնի, պետությունը անում է այն բոլորը, ինչ վոր ներում են նրա ուժերը, բայց դա յե թիչ է: Պետության արամադրության տակ կան միլիոններ իսկ անհրաժեշտ են միլիարդներ: Միայն մի յեյր կա. դիմել փոխառություններին:

Խորհրդային իշխանությունը վարկ ստանալու համար դիմել է արտասահմանին: Արտասահմանի հա-

ընտանեքը մեզ չմերժեցին, բայց ներկայացրին այնպիսի դժվարին և ստրկացնող պայմաններ, վոր մենք այդ «լավությունից» հրաժարվեցինք: Մենք ի հարկ ե, կրատանանք փոխառություն՝ մեզ համար ընդունելի պայմաններով, բայց դրա համար մենք պետք է մեր սեփական ուժերով վերականգնենք մեր տնտեսությունը: Յեւ քանի չառ մենք ամբանանք, այնքան ավելի շուտ և մեզ համար ձեռնառու պայմաններով փոխառություն կստանանք արտասահմանից: Չցանկանալով բարձրացնել հարկերը այլ ընդհակառակը ձգտելով պակասեցնել այն և միաժամանակ հնարավորություն չունենալով արտասահմանից ընդունելի պայմաններով փոխառություն ստանալու, Խորհրդային Կառավարությունը, ձեռնարկում է ներքին փոխառությունների: Թեպետ մեր յերկիրը աղքատ է, այնուամենայնիվ կատարվում է մանր, փոշիացած միջոցների կուտակումն:

Այդ մանր խնայողություններն, աղատ և կիսաաղատ միջոցները, պետությունն ուղղում է հավաքել իր դանձարանը, վորպեսզի դրանցով կազմվի միլիոններ, վորոնցով հնարավոր կլինի հոգալ դյուղի և դյուղացու կարիքները:

Ձեռնարկել այն խոշոր աշատանքները, վորոնց մասին ասացինք:

Այդ փոշիացած միջոցների ժողովուրդը 2-րդ Գյուղացիական Փոխառությունն է հանդիսանում:

Խորհրդային միության աշխատավորները, վարկ տալով իրենց կառավարությանը, իրենց են ուղնում, վորովհետեւ այն դրամը վորը փոխարինաբար տրվում է պետությանը, ծառայում է ընդհանուր դործին վորում չահագործված ամեն մի աշխատավոր:

Գյուղացիների և բանվորների միացյալ ուժերով և նրանց ոժանդակությամբ, Խորհրդային Կառավարու-

թյունը լիակատար ձեով կկարողանա վերականգնել, առողջացնել և ծաղկեցնել ժողովրդական ամբողջ տնտեսությունը և բարձրացնել բնակչության բարեկեցության մակարդակը:

Ի՞նչպես պետք է կատարվի գյուղացիական փոխառության իրացումն

Ստիպել չի կարելի: Փոխառության պարտատոմսերի գնման կամ դանազան կազմակերպությունների և անձանց կողմից նրանց գյուղացիներին՝ հանձնման առանց վերջինների ցանկության և համաձայնության, չի թույլատրվում. ստիպողականությունը հետապնդվում է սրենքով:

Այդ առթիվ Միության Ժողկոմխորհը հատուկ վորոշում է հրատարակել: Փոխառությունը տուրք չի: Տուրքը պետության կողմից դրվում է վորոշ քաղաքացիների վրա և վերջինները պարտավոր են վճարել այդպիսին: Անբարեխիղջ հարկատուները դատի են կանչվում:

Այդպիսով հարկը գանձվում է ստիպողաբար:

Իսկ փոխառության պարտատոմսերի գնումը՝ յուրաքանչյուր գյուղացու սեփական գործն է. ով դա իրեն ողտակար և համարում, նա ել գնում է: Փոխառությունը վոչ միայն տուրք չի, այլ ինչպես տեսանք, նա բաց է թողվում այն նպատակով, վորպեսզի գյուղացուն հնարավորություն տրվի հարմար և ձեռնտու ձեով պահ տալու իր խնայողությունները: Պետությունը չի ցանկանում փոխառությունները հավաքել ստիպողաբար:

Գյուղացիական փոխառության պարտատոմսի գնումը կամավոր է: Պետությունն ասում է՝ ով փող ունի, վոր այսօր չի ողտադործում կամ պետք է գործադրվի (ծախավի) մի վորոշ ժամանակից հետո, թող այդ փողը տա կառավարությանը. իսկ նա վոչ միայն ձեզ կվերա-



դարձվի, այլ կտա շոշափելի յեկամու՝ տոկոսներ, չա-
համներ և գյուղհարկը մուծելու ձեռնառու պայմաններ:

Խորհրդային կառավարութեան կողմից բաց թողված
փոխառութեանները չեն պահանջում վորեւէ գոհարեռու-
թյուն. ում ձեռնառու յե նա յեւ թող զնի այդ պարտա-
տոմսերը: Գալով այն հարցին թե վորքան ձեռնառու յեն
խորհրդային կառավարութեան փոխառութեանները, դա
արդեն ապացուցված է այն հաջողութեաններով, վոր
ունեցել են մինչայժմ բաց թողված փոխառութեանները:

Փոխառութեանները կառուցվում են այնպես, վոր
նրանք ձեռնառու յեն, թե՛ պարտատոմսեր գնողներին և
թե՛ պետութեան համար:

V.

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏԵՐԸ ՇՐՋՈՐԾԿՈՄՆ Ե

Գյուղացիական փոխառութեան մեջ շահագրգռված
է գյուղական ամբողջ բնակչութեանը: Անհրաժեշտ է
վորպեսզի գյուղացին փոխառութեան պարտատոմսերը
կարողանա գնել իր գյուղում, չգիմելով այդ առթիւ քա-
ղաք, մինչև իսկ Շրջործկոմ, կամ վորեւէ մի ուրիշ հե-
ռավոր տեղ:

Յեւ ահա, վորպեսզի պարտատոմսերի վաճառքը մո-
տեցվի ազգաբնակչութեանը, վորպեսզի գյուղացին կա-
րողանա պարտատոմսը գնել առանց միջնորդի, վորը կա-
րող է ստանալ ողուտի մի վորոշ մասը, այդ պատճառով
էլ, բացի բանկերից, փոխադարձ-վարկի բնկերութեան-
ներից, Փին-մարմիններից, Աշխնազանձարկերից,
փոստ-հեռագրական հաստատութեաններից և կոոպերա-
տիվներից, փոխառութեան պարտատոմսերը վաճառվե-
լու յեն նաեւ գյուղում:

Այդ վաճառքի կազմակերպումը գյուղում հանձ-
նվում է շրջանին: Փոխառութեան տերը Շրջործկոմն է

գտնում: Շրջործկոմը մոտ գտնվելով ազգաբնակու-
թեան յայն մասսաներին, լավ գիտե իր շրջանի կենցա-
ղային և կուլտուրական յուրահատուկ կողմերը: Նա կա-
րող է ավելի լավ կազմակերպել իր աշխատանքը. կարող
է մասնակից դարձնել ավելի մեծ թվով գործակալների
այսինքն՝ փոխառութեան տարածողների, ավելի լավ հե-
տեւել վերջինների աշխատանքներին և այլն:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԼԻԱԶՈՐ.

Այսպիսով, գյուղացիական փոխառութեան տարած-
ման գործը ավելի լավ հիմքերի վրա դնելու համար,
մասնակից են դարձվում Շրջործկոմները: Յուրաքան-
չյուր շրջանում, Շրջործկոմների անդամների թվից
նշանակվում է փոխառութեան իրացման լիազոր: Շրջա-
նային լիազորը նշանակվում է գավառային լիազորի կող-
մից, վորը գտնվում է Գավթինբաթին կից: Նշանակել
Շրջանային լիազոր, ղեկավարել նրա աշխատանքները և
միաժամանակ պաշտոնանկ կամ նկատողութեան անել
սխալ գործերի համար և այլն, կարող է միմիայն գավա-
ռային լիազորը: Ուստի՝ բոլոր բողոքները կամ հայա-
րարութեաններ Շրջլիազորների արարքների վերա-
բերյալ պետք է ուղղել գավառ, կամ՝ Հ. Խ. Ս. Հ.
Ֆինթոյկոմատին: Ինչպես տեսնում ենք, փոխառութեան
իրացման լիազորները նշանակված են նրա համար վոր-
պեսզի փոխառութեան տարածման գործում գյուղական
ազգաբնակչութեան շահերը լավ պաշտպանվեն և զբանով
ողնեն պետութեանը: Լիազորի պարտականութեանները
փոխառութեան նկատմամբ չառ մեծ են: Նա յե վոր իր
շրջանի սահմաններում կազմակերպվում է գործակալնե-
րի ցանցը: Շրջանում աշխատելով, պարզ է վոր նա ավե-
լի քան ծանոթ է նրա հեա՝ ճանաչում է մարդկանց և գոր-
ծող կազմակերպութեաններին, վորոնք կարող են ակտիվ
աշխատանք տանել գյուղում, տարածելով փոխառու-
թեան պարտատոմսերը: Մասնակից դարձնելով գործա-

կալներին, լիազորը ղեկավարում է նրանց աշխատանքը՝ տալիս ե ցուցմունքներ, խորհուրդներ, ամեն կերպ աջակցում է նրանց և այլն:

Բացի այդ, լիազորի վրա գրված են հետևյալ պարտականությունները՝ ստանալ գալստային լիազորից փոխառության պարտատոմսեր, ազխտացիոն նյութեր բաժանելով այգպիսիները գործակալների միջև, հետևել գործակալների աշխատանքներին փոխառության պարտատոմսերի տարածման գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար. հետևել, փորպեսպի շրջանում պարտատոմսերը գյուղացիության մեջ պարտադիր կերպով չտարածվեն. վոր ազխտացիոն նյութերը ոգտագործված լինեն նպատակահարմար ձևով. վոր առանց ուշացնելու կիրառվեն կյանքում, գալստային լիազորի կարգադրությունները. հետևել վոր իր ժամանակին պարտատոմսերի վաճառքից ստացված գրամը գործակալները նրան հանձնեն. ժամանակին ուղարկել նրա, և գործակալների կողմից՝ վաճառքից ստացված գրամը, գալստակային լիազորի հասցեյով. կազմել և ուղարկել փոխառության իրացման հաշվետվությունները և վերջապես ինքը շրջլիազորը կարող է վաճառել պարտատոմսեր:

Շրջլիազորի վրա գրված պարտականությունների համար, նրան տրված է նաև համապատասխան իրավունքներ:

VI.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ

Ինչպես ասացինք, իր շրջանի սահմաններում, շրջլիազորը կազմակերպում է գործակալների ցանց. գործակալները կոչվում են նրա կողմից, նախ շրջանի կուլտուրական ութերից՝ ուսուցիչներից, գյուղատնտեսներից, բուժականներից, խրճիթ-ընթերցարանի, ախումբ-

ների, գրադարանների վարիչներից և այլն: Ի դեպ՝ անշուշտ տվյալ շրջանի բնակիչներից և միմիայն նրանց կամավոր համաձայնությամբ: Այնուհետև շրջլիազորը նույն հիմունքներով գործակալներ է գտնում առաջագեմ գյուղացիների միջավայրից, վորոնք աշխատում են գյուղում բնտրական պաշտոններով. որինակ՝ անդամ են գյուղխորհրդի, խորհուրդների վերընտրության Հանձնաժողովի և այլն:

Գործակալների բնտրության գործն ամբողջովին բնկած է շրջլիազորի վրա, վորը նրանց ընտրելիս ղեկավարվում է գործի շահերի տեսակետից: Այգպիսի գործակալներին աշխատանքի կոչելը, մեծ ոգուտ է բերելու փոխառության տարածմանը:

Գրադետ անձնավորությունը փոխառության մասին գրքույկներ կամ թուղթիկներ կարգալով կարող է ղեկուցել կամ պատմել գյուղացիներին փոխառության ոգուտների և նրա բոլոր պայմանների մասին: Ի հարկե գործակալը պետք է լինի այգպիսի անձնավորություն, վորը համարաք ու հարգանք է վայելում ազգաբնակչության մեջ. միայն այդ դեպքում նրա աշխատանքի պայմանները կարող են հաջող լինել և ցանկալի ու բարեհաջող հետևանքը տալ: Գործակալները հրավիրվում են լիազորների կողմից, տալով նրանց ստորագրություն:

Յեթե շրջլիազորը գտնում է, վոր նրա հրավիրած գործակալը չի գործում ստորագրության մեջ յեղած կանոնների համաձայն, վոր տվել է նրան գործակալը, այդ դեպքում լիազորն իրավունք ունի այգպիսի անշուրհ գործակալին հեռացնելու, սղահանջելով նրանից անհապաղ՝ հաշվետվություն և հանձնումն, վաճառված պարտատոմսերի գրամի և տակավին չվաճառված պարտատոմսերի:

Գործակալի կողմից չբնականորեն տրվում է այս ձևի ստորագրութուն՝

Ստորագրութուն

Հայաստանի հանրապետության

. գավառի

Հրջանի գործակալ՝

. -ի գործակալի անունը, հայրանունը և ազգանունը

. պաշտոնը

. բնակավայրը

.

1. Լինելով ԽՍՀՄ Ֆինոգիոմատի շրջանային լիազորի հրավերած գործակալը, 2-րդ Գյուղացիական կազարկու Փոխառության պարտատոմսերն իրացնելու գործում, պարտավորում եմ, իբրև ԽՍՀՄ Ֆինոգիոմատի գործակալ, բացել ինձ մոտ հիշյալ փոխառության պարտատոմսերի վաճառք բացասական դյուղում:

2. Ճշտությամբ կատարել, ԽՍՀՄ Ֆինոգիոմատի 1925 թվի հոկտեմբերի 21-ի գյուղացիական կազարկու Փոխառության պարտատոմսերի վերաբերյալ № 57 շրջաբերականով, գործակալների վրա դրված բոլոր պարտականությունները, վորպիսի շրջաբերականը ծանոթ է ինձ:

3. Մասնավորապես պարտավորվում եմ պարտատոմսերի վաճառքից ստացած գումար իմ ժամանակին այն ե՝ ամսի 1-ին, 10-ին և 20-ին հանձնել շրջանային լիազորին, նրանից հետո պահելով միայն ինձ հասնելիք 2 տոկոս կոմիսիոն վարձատրությունը: Դրամի հետ միասին, պարտավորում եմ ներկայացնել, հաշվային տեղեկագիր ինձ հայտնի ձևով: Պարտավորում եմ առ 1-ի յուրաքանչյուր ամսի ներկայացնել չիրացված պարտատոմսերի կարոնները:

4. Շրջլիազորի, նաև շրջաբերականում ցույց տրված մյուս լիազոր անձանց կողմից, իմ լիազորությունների դադարեցման վերաբերյալ պահանջ լինելու դեպքում, պարտավորվում եմ անհապաղ հանձնել հաշիվը, փողը և պարտատոմսերը:

5. Ժամանակն անցած գումար և կարոնները ինչպես նաև պարտատոմսերը վոչ ժամանակին հանձնելու (ստորագրության 3-րդ և 4-րդ կետեր) դեպքում, պարտավորվում եմ բացի չհանձնված գումարից, չհայթհայթված կարոնների, կամ նրանց արժեքների, չհանձնված պարտատոմսերի կամ նրանց անվանական արժեքի վերադարձնելուց, վճարել նաև տուժանք*), չհանձնված գումարի, չհայթհայթված կարոնների արժեքի, կամ չհանձնված պարտատոմսերի անվանական արժեքի % -ով:

Սույն ստորագրության մնացած կետերից վորեկ մեկի խախտման դեպքում պարտավորվում եմ վճարել ուրբու տուժանք:

. 1925 թվի

Գործակալ

Լիազորի կողմից իբրև գործակալի, վորեկ հիմնարկության կամ կազմակերպության (կոոպերատիվ, վարկային ընկերություն և այլն) աշխատանքի կոչման դեպքում, անվան հոր անվան, ազգանվան և բնակավայրի փոխարեն, գրվում է ավյալ հիմնարկության անունը և նրա վարչության տեղը: (Որինակ՝ Աշտարակի վարկային ընկերություն՝ Եջմիածնի գավառի Աշտարակ գյուղում):

*) Տուժանքի չափը վորոշվում է գավառային լիազորի կողմից, շրջանային լիազորի բոլոր գործակալների համար:

Այնուհետև ստորագրութեան բոլոր տեղերում, «պարտավոր եմ» բառից առաջ, պետք է գրել հիմնարկութեան կամ կազմակերպութեան լրիվ կոչումը և «պարտավոր եմ» բառի փոխարեն գրել «պարտավորվում եմ»: (Որինակ՝ Աշտարակի վարկային ընկերությունը պարտավորվում է): «Իմ», «կողմից» բառերի փոխարեն, նախած կազմակերպության կոչմանը, պետք է գրել՝ «Ապագա ողական ընկերություն» և այլն:

Անհրաժեշտ է վոր ստորագրությունը, ստորագրող ված լինի այն անձանց կողմից և այն թվով, ինչպես դա պահանջում է ավյալ կազմակերպության կամ հիմնարկութեան մասին յեղած կանոնադրությունը:

VII.

ԻՆՁ ՊԵՏՔ Ե ԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼԸ

Գործակալի աշխատանքը բաժանվում է 3 մասի, բայց նրանք բոլորն էլ սերտորեն կապված են միմեյանց հետ: Նախ և առաջ գործակալը հենց փոխառութեան պարտատոմսերի տարածման գործն է տանում: Յերկրորդ ազիտացիա յե մղում է յերրորդ տանում է հաշվեավորությունը:

Նախ խոսենք առաջինի մասին, այսինքն՝ փոխառութեան պարտատոմսերի տարածման կարգի մասին:

VIII.

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՅԵՎ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ:

Մենք արդեն գիտենք, վոր շրջլիազորն իրավունք ունի գործակալին հետացնելու յեթե վերջինը իր աշխատանքի ընթացքում չի կատարում ստորագրութեամբ սահմանված կանոնները: Իսկ յեթե լիազորը գործակալին ներկայացնի անորեն պահանջ, այդ դեպքում վերջինս կարող է բողոք տալ շրջլիազորի արարքի համար, փոխա-

ռութեան իրացման դավառային լիազորին: Այնուամենայնիվ՝ գործակալի բողոք տալը (շրջլիազորի արարքի համար), վոչ մի բանում չի կանգնեցնում վերջինիս կարգադրությունները:

Յեւ առհասարակ գործակալներն, իրենց աշխատանքում ղեկավարվում են այն կարկադրություններով և ցուցմունքներով, վորոնք առաջադրվում են շրջլիազորի կողմից: Հենց նրան են դիմում բոլոր տեղեկանքների և խորհուրդների համար: Լիազորից նրանք ստանում են փոխառութեան պարտատոմսերը, ազիտացիոն նյութը և նրան են հանձնում փողն ու հաշվեավորությունը:

IX.

ԻՆՁՊԵՍ ԵՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ՍՏԱՆՈՒՄ:

Փոխառութեան պարտատոմսեր գործակալներն ստանում են շրջլիազորից, վորն իր հերթին ստանում է գաւառային լիազորից: Պարտատոմսերը գործակալների մէջ բաժանելիս, շրջանային լիազորը, հաշվի յե առնում պարտատոմսեր տարածելու այն հնարավորությունները վոր ունի յուրաքանչյուր գործակալ: Ով կարող է ամէլի շատ պարտատոմսեր տարածել, հենց նա յեւ մեծ քանակութեամբ ստանում է: Ըստ պարտատոմսեր տարածելու և փողն ու հաշվեավորությունը շրջանային լիազորին ներկայացնելու շափի, վորի մասին կխոսենք ստորեւ, գործակալը շրջանային լիազորից ստանում է պարտատոմսերի նոր քանակ: Պարտատոմսեր ստանալիս, գործակալը շրջանային լիազորին ստացական է տալիս, վորը կրկին հետ է ստանում հաշվեավորությունը և փողը հանձնելուց հետո:

ԳՈՐԾԱԿԱԼԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Պարտատոմսեր տարածելու աշխատանքի համար, գործակալները պետութիւնից վարձատրութիւն են ստանում: Ի դեպ, ի հարկէ ավելի չատ վարձատրութիւն ստանում է նա, ով ավելի չատ պարտատոմսեր է տարածել, այսինքն՝ վարձատրութիւնը գտնվում է տարածված պարտատոմսերի հետ ուղիղ հարաբերութեան մէջ:

Այդպիսով 200 ուրբու տարածողն ավելի յէ ստանում, քան 50 ուրբու տարածողը: Վարձատրութիւնը սահմանված է գործակալի վաճառած փոխառութեան պարտատոմսի գումարի 2%-ի չափով: Որինակ՝ 200 ո. պարտատոմսեր վաճառողը ստանում է 4 ո. վարձատրութիւն: 50 ուրբու պարտատոմսեր վաճառողը ստանում է 1 ո. վարձատրութիւն: Գործակալն այդ վարձատրութիւնն ստանում է փոխառութեան վաճառված պարտատոմսերի դրամը չրջանային լիազորին հանձնելիս:

ԻՆՉՊԵՍ Ե ԳՈՐԾԱԿԱԼԸ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ՏԱՐԱԾՈՒՄ

Փոխառութեան պարտատոմսերի տարածելն իր վրա վերցնող յուրաքանչյուր անձնավորութիւն՝ ուրեմն գործակալը, այդ մասին լայնորեն տեղեկացնում է իր գյուղի կամ ավանի ազգաբնակչութեանը, հավաքելով ների միջոցով և այլ յեղանակներով: Գործակալը հայտնում է այն տեղը, և ժամերը ուր նա պարտատոմսերի վաճառք է կատարելու: Ի դեպ՝ այդ տեղում և խոտացած ժամերին նա պետք է անպայման ներկա գտնվի:

Չափազանց ցանկալի յէ, վոր այդ բոլոր տեղեկացումները կատարվեն հայտարարութեան փակցման ճա-

նապարհով, մի վորոչ, աչքի բնկնող և ազգաբնակչութեանը նախորոք հայտարարված տեղ, որինակ Գյուղ-խորհրդի մոտ, խրճիթ-բնիկացարանում, կոոպերատիվում և այլն:

Գործակալը կարող է և պետք է պարտատոմսերը տարածի կամավոր կարգով: Ամեն տեսակի ստիպողականութիւն, ինչպիսին էլ վոր նա լինի, արգելված է որեւքով և այդպիսին թույլ տվող յուրաքանչյուր վորք, պատասխանատու յէ դատարանի առաջ:

Փոխառութեան պարտատոմսերի հաջող տարածման գործին պետք է նպաստի ագիտացիան վորը կազմում է գործակալի աշխատանքի յերկրորդ մասը:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՄՂԵԼ ԱԳԻՏԱՑԻԱՆ

Ագիտացիայի նշանակութիւնն ու խնդիրը

Ներկա դրքույկի սկզբում մենք համոզվեցինք, վոր գյուղացիական փոխառութիւնը մեծամեծ ոգուաներ է բերում գյուղացիութեանը և ոգտակար է պետութեան համար:

